Հոգեբանություն

Ծրագրի մասնագիրը (սպեցիֆիկացիան)

1. Ծրագրի անվանումը և մասնագիտության թվանիշը	Անձի հոգեբանություն եվ հոգեբանական խորհրդատվություն 031301.07.7
2. Բուհը	Վանաձորի պետական համալսարան
3. Ծրագիրը հավատարմագրված է	-
4. Շնորհվող որակավորումը	Հոգեբանության մագիստրոս
5. Ծրագրի մեկնարկի ուսումնական տարին	2019/2020
6. Ուսումնառության լեզուն	Հայերեն
7. Ուսուցման ձևը	Առկա / Հեռակա

8. Ծրագրի ընդունելության չափանիշները

Մագիստրոսի ծրագրում ընդունելությունը իրականացվում է ըստ ՎՊՀ համապատասխան կանոնակարգի: (Արձանագրություն թիվ 10 31.10.2019թ.) Կարգի իրավական հիմքերն են ՀՀ սահմանադրությունը, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը, Համալսարանի կանոնադրությունը, ՀՀ ԿԳ նախարարի 2007 թ. դեկտեմբերի 6-ի թիվ 1193-Ն հրամանով հաստատված «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգը»:

9. Կրթական ծրագրի բնութագիրը

«Անձի հոգեբանություն և հոգեբանական խորհրդատվություն» մագիստրոսական կրթական ծրագիրը ապահովում է մասնագիտական գիտելիք և իմացություն, գործնական մասնագիտական կարողություններ և հմտություններ, ընդհանրական (փոխանցելի) կարողություններ և հմտություններ ունեցող մասնագետներ տվյալ ոլորտում, որոնք օժտված կլինեն խորը գիտելիքներով անձի հոգեբանության և հոգեբանական խորհրդատվության ոլորտում, կտիրապետեն աշխատանքի գիտահետազոտական մեթոդներին, ունակ և պատրաստ կլինեն ինքնուրույն գիտահետազոտական, գիտամանկավարժական և պրակտիկ գործունեությանը: Մագիստրոսական ծրագիրը թույլ է տալիս տիրապետել անձի հոգեբանական տարբեր տեսությունների հիմնարար վերլուծությանը, հոգեբանական խորհրդատվական աշխատանքի բազմաթիվ ձևերին և եղանակներին: Հատուկ ուշադրություն է դարձվում անձի ժամանակակից հոգեբանական տեսություններին, հոգեախտորոշիչ, հոգեթերապևտիկ, հոգեբանական խորհրդատվական և թրեյնինգային աշխատանքի անհատական և խմբային ձևերին:

10. Շրջանավարտի մասնագիտական գործունեության բնութագիրը

«Անձի հոգեբանություն և հոգեբանական խորհրդատվություն» մասնագիտությամբ կրթություն ստացած հոգեբանները իրենց գիտելիքները, հմտությունները և կարողությունները կարող են օգտագործել կրթության, առողջապահության, սոցիալական պաշտպանության և սպորտի հոգեբանության ոլորտում, նաև լայն շրջանակի խնդիրների լուծման համար՝ կառավարման պետական ծառայության և զանգվածային լրատվական միջոցների համակարգերում: Այս մասնագիտության մագիստրոսները պահանջված են աշխատաշուկայում, մասնավորապես հոգեբանական օգնության և աջակցության կենտրոններում, կրթական համակարգի

հաստատություններում:
11. Ծրագրի նպատակները
1. Կրթական ծրագրի նպատակը «Անձի հոգեբանություն և հոգեբանական խորհրդատվություն» մագիստրոսական կրթական ծրագրի **նպատակն է** պատրաստել անձի հոգեբանության հիմնախնդիրների վերաբերյալ կիրառական ուսումնասիրություններ իրականացնող և հոգեբանական աջակցություն ցուցաբերող մասնագետներ, որոնք ունակ կլինեն. • բացահայտելու և վերլուծելու անձի հիմնախնդիրները, • լուծելու և ապահովելու ազգաբնակչության տարբեր շերտերի հոգեկան առողջությանը վերաբերող խնդիրները, • իրականացնելու հոգեբանական, հոգեթերապևտիկ, հոգեախտորոշիչ աշխատանքներ տարբեր կազմակերպություններում և հաստատություններում • իրականացնելու գիտական հետազոտություններ, • դասավանդելու հոգեբանություն ճյուղի դասընթացը կրթության տարբեր ոլորտներում:
12. Ծրագրի կրթական վերջնարդյունքները:

Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն		**Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ և հմտություններ**	
Ա1.	Ներկայացնել անձի հոգեբանության տեսական մոտեցումները, գիտաճյուղերի հիմնադրույթները, դասական և ժամանակակից տեսությունները	**Գ1**	Կառավարելու անձի հոգեբանության և հոգեբանական խորհրդատվության գործառույթները և ծրագրերը և այդ շրջանակներում կայացնելու ինքնուրույն որոշումներ
Ա2.	Կիրառել հոգեբանության հետազոտությունների մեթոդաբանությունը և խորհրդատվության առանձնահատկությունները տարբեր ոլորտներում	**Գ2**	Օգտվելու տեղեկատվական տարատեսակ աղբյուրներից, մշակելու և ներկայացնելու տեղեկատվությունը
Ա3.	Նկարագրել հոգեկանի օրենքներն, օրինաչափությունները և մեխանիզմները	**Գ3**	Ձգտելու զարգացնելու ինտելեկ-տուալ, կոմունիկատիվ և կազ-մակերպչական հմտությունները
Ա4.	Թվարկել հոգեկան ակտիվության մակար-դակները, գործընթացների, որակների, վիճակների, հատկությունների տիպա-բանությունը և առանձնահատկությունները	**Գ4.**	Վերլուծելու անձի հոգեբանության և հոգեբանական խորհրդատվության առկա խնդիրները և գնահատելու դրանց լուծման համար անհրաժեշտ ռեսուրսները
Ա5.	Տարբերակել հոգեկանի և վարքի նորման, շեղումները և պաթոլոգիան	**Գ5**	Պատրաստել զեկուցումներ, ներ-կայացնել հետազոտության արդյունքները, վարել գիտական

			բանավեճեր
Ա6.	Նկարագրել հոգեբանական օգնության մակարդակները, բացատրել դրանց կազմակերպման առանձնահատկությունները, թվարկել մեթոդները	Գ6	Աշխատելու հետազոտական խմբում և ղեկավարելու այն
Ա7.	Ներկայացնել հոգեբանի գործունեության էթիկական նորմերը, գործունեության տարբեր ոլորտներում ներկայացվող պահանջները	Գ7	Համակարգչային ծրագրերից (Word, Excel, Power Point) օգտվելու կարողություն
Բ. Գործնական մասնագիտական կարողություններ և հմտություններ			
Բ1.	Կազմակերպելու հոգեբանական ուսումնասիրություններ և հետազոտություններ, կիրառելու հետազոտության արդյունքների որակական և քանակական մեթոդները, անհատական և խմբային հոգեթերապիայի, սոցիալ-հոգեբանական թրեյնինգի մեթոդները. կատարելու մասնագիտական հոգեբանական մեկնաբանություններ	Բ4	Մշակելու և կիրառելու անձի զարգացման և շտկողական աշխատանքների հնարներ, գործիքներ և մեթոդներ
Բ2.	Կիրառելու տեսական և գործնական գիտելիքներն ու կարողությունները մասնագիտական գործունեության սահմաններում և առօրյայում	Բ5	Մոդելավորելու և ստեղծագործաբար լուծելու գործունեության տարբեր տեսակների հոգեբանական խորհրդատվական խնդիրները տարբեր կազմակերպություններում
Բ3	Համեմատելու հոգեբանական երևույթների, անձի հոգեբանական անվտանգության հիմնախնդիրների վերաբերյալ ինֆորմացիան	Բ6	Մասնագիտական գործունեության սահմաններում նորարարական գաղափարների իրացում, այլընտրանքային որոշումների կայացման ընդունակություն

12.1. Ծրագրի ընդհանուր կառուցվածքի նկարագրությունը

Մագիստրատուրայի կրթական ծրագիրը բաղկացած է 4 հիմնական կրթամասերից՝ ընդհանուր (6 կրեդիտ աշխատածավալով), մասնագիտական պարտադիր (44 կրեդիտ աշխատածավալով), կամընտրական (22 կրեդիտ աշխատածավալով) և գիտահետազոտական (48 կրեդիտ աշխատածավալով):

1. ***Ընդհանուր դասընթացների կրթամաս*** *(6 կրեդիտ)*

   Ներառում է ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ դասընթացներ, որոնք նպատակաուղղված են տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմանը մասնագիտական ոլորտում և մասնագիտական արդի հիմնախնդիրների ուսումնասիրությանը:

2. ***Մասնագիտական պարտադիր դասընթացների կրթամաս*** *(44 կրեդիտ)*

   Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ մասնագիտական դասընթացներ, որոնք ապահովում են մասնագիտական ոլորտի հիմնախնդիրների պատշաճ ընկալումը նպատակաուղղված են անձի հոգեբանության և հոգեբանական խորհրդատվության տեսագործնական գիտելիքների, կարողությունների և հմտությունների մասնագիտական հենքի ձևավորմանը:

3. ***Մասնագիտական կամընտրական դասընթացների կրթամաս*** *(22 կրեդիտ)*

   Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ մասնագիտական դասընթացներ, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու երկուսը:

4. ***Գիտահետազոտական դասընթացների կրթամաս*** *(48 կրեդիտ)*

   Ներառում է մագիստրոսական ծրագրի ղեկավարի գիտական սեմինարը, մագիստրոսական ատենախոսության թեմայով գիտահետազոտական աշխատանք, գիտահետազոտական և գիտամանկավարժական պրակտիկաներ և մագիստրոսի թեզի ձևակերպում և պաշտպանություն:

12.2. Ուստարիներ և ուսումնական մոդուլներ

1-ին ուստարի /1-2 կիսամյակներ/

Ընդհանուր դասընթացների կրթամաս

- Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական ոլորտում (3 կրեդիտ)
- Մասնագիտության արդի հիմնախնդիրները (3 կրեդիտ)

Մասնագիտական պարտադիր դասընթացների կրթամաս

- Զարգացման հոգեբանություն(5 կրեդիտ)
- Հատուկ հոգեբանություն (5 կրեդիտ)
- Հոգեբանական հետազոտությունների մեթոդաբանություն (6 կրեդիտ)
- Հոգեսոմատիկա (6 կրեդիտ)
- Սոցիալ-հոգեբանական թրեյնինգ (5 կրեդիտ)
- Բնավորության հոգեբանություն (6 կրեդիտ)

Մասնագիտական կամընտրական դասընթացների կրթամաս

- Քաղաքական հոգեբանություն/ Մանկան հոգեթերապիա (3 կրեդիտ)

Գիտահետազոտական դասընթացների կրթամաս

- Մագիստրոսական ծրագրի ղեկավարի գիտական սեմինար (4 կրեդիտ)
- Գիտահետազոտական աշխատանք մագիստրոսական ատենախոսության թեմայով (2 կրեդիտ)

ԸՆԴՀԱՆՈՒՐ 48 կրեդիտի կուտակում:

2-րդ ուստարի /3-4 կիսամյակներ/

Մասնագիտական պարտադիր դասընթացների կրթամաս

- Անձի հոգեբանական անվտանգության հիմնախնդիրներ (5 կրեդիտ)
- Հոգեթերապիա (6 կրեդիտ)

Մասնագիտական կամընտրական դասընթացների կրթամաս

- Ուսանողի հոգեբանության հիմնախնդիրներ/ Հոգեբանական խորհրդատվություններ կազմակերպություններում (4 կրեդիտ)
- Վախի հոգեբանություն/ Խմբային և անհատական հոգեթերապիա (4 կրեդիտ)
- Ստի հոգեբանություն/ Մշակույթի հոգեբանություն (4 կրեդիտ)
- Անդրոհոգեբանություն/ Խորհրդատվությունը առողջապահական հաստատություններում (3 կրեդիտ)
- Կրոնի հոգեբանություն/ Ընտանիքի խորհրդատվություն (4 կրեդիտ)

Գիտահետազոտական դասընթացների կրթամաս

- Մագիստրոսական ծրագրի ղեկավարի գիտական սեմինար (6 կրեդիտ)
- Գիտահետազոտական աշխատանք մագիստրոսական ատենախոսության թեմայով (9 կրեդիտ)
- Գիտահետազոտական պրակտիկա (3 կրեդիտ)

ԸՆԴՀԱՆՈՒՐ 48 կրեդիտի կուտակում:

3-րդ ուստարի /5-րդ կիսամյակ/

Գիտահետազոտական դասընթացների կրթամաս

- Մագիստրոսական ծրագրի ղեկավարի գիտական սեմինար (2կրեդիտ)
- Գիտահետազոտական աշխատանք մագիստրոսական ատենախոսության թեմայով (4 կրեդիտ)
- Գիտամանակավարժական պրակտիկա (6 կրեդիտ)
- Մագիստրոսի թեզի ձևակերպում և պաշտպանություն (12 կրեդիտ)

ԸՆԴՀԱՆՈՒՐ 24 կրեդիտի կուտակում:

12. 3. Պրակտիկայի հնարավորությունները և պայմանները

Պրակտիկան կազմակերպվում է գիտական ղեկավարի հետ համատեղ կազմված և հաստատված ծրագրով: Կարող է իրականացվել.

- Հոգեբանական կենտրոններում,
- մանկապարտեզներում
- դպրոցում
- կառավարական և ոչ կառավարական կազմակերպություններ

- արտադրական ձեռնարկություններում և բիզնես ոլորտում:
- Խնամքի կենտրոնում

Մանկատանը «Անձի հոգեբանություն եվ հոգեբանական խորհրդատվություն» մագիստրոսի հիմնական կրթական ծրագրի ՝Պրակտիկաներ՝ բաժինն իրենից ներկայացնում է ուսումնական պարապմունքների միտեսակ՝ անմիջականորեն ուղղորդված սովորողների մասնագիտական գործնական պատրաստության:

Ուսուցման ընթացքում ձեռքբերած տեսական գիտելիքներն ամրապնդելու և գործնական աշխատանքի հմտությունների ձեռքբերելու նպատակով բնագավառի տարբեր կազմակերպություններում, հիմնարկներում և հաստատություններում կազմակերպվում են ուսանողների գիտահետազոտական և գիտամանկավարժական պրակտիկաներ:

Պրակտիկաների նպատակները և խնդիրները, ծրագրերը և հաշվետվության ձևերը որոշվում են բուհի կողմից՝ ըստ յուրաքանչյու ոպրակտիկայի տեսակի:

Պրակտիկան կարող է կազմակերպվել նաև այլ կազմակերպությունում՝ նախապես կազմված անհատական ծրագրով:

Պրակտիկան կարող է իրականացվել այլ կազմակերպությունների ունեցած նյութատեխնիկական բազայի հիման վրա:

Պրակտիկայի բովանդակությունը, պահանջները և ընթացակարգերը որոշվում են ՀՀ պետական կրթական չափորոշչով, պրակտիկայի տևողությունը և ժանկետները՝ առկա ուսուցման ուսումնական պլանի ժամանակացույցին համապատասխան:

Ուսումնական և արտադրական պրակտիկայի արդյունքներով ուսանողի կողմից ներկայացվում է հաշվետվություն՝ իր գործունեության բոլոր տեսակների վերլուծություններով:

12.4. Ավարտական ատեստավորումներ	
Ուստարի	**Անվանումը**
3-րդ ուստարի	Մագիստրոսի թեզի ձևակերպում և պաշտպանություն Ամփոփիչ ատեստավորում

13. Ուսումնական պլանի քարտեզը

Կցված է

14. Տեղեկատվություն գնահատման կարգի վերաբերյալ

Տես Հավելված «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական պետական համալսարան» ռեկտորի 02.03.2017. թիվ156Լ/Կ հրամանի

Բալային-ռեյթինգային համակարգով ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և հաշվառման կանոնակարգ

15. Ապագա կարիերայի հնարավորությունները

«Անձի հոգեբանություն և հոգեբանական խորհրդատվություն մագիստրատուրայի ծրագրի շրջանավարտները հնարավորություն կունենան աշխատելու որպես՝ • հոգեբան -խորհրդատու Շրջանավարտները կարող են աշխատել նաև հետևյալ հաստատություններում. ▪ հիմնական և ավագ դպրոցներում, ▪ հատուկ ծրագրով ուսուցմամբ կրթական հաստատություններում, ▪ հոգեբանական ծառայության կենտրոններում, ▪ ըստ պահանջի տարբեր կառույցներում:
16. Ուսումնառության օժանդակության ռեսուրսներ և ձևեր (եթե կան)
Ուսումնառության գործընթացում օգտագործվում են գրադարան և գրականության էլեկտրոնային ռեսուրսներ, տեխնիկական ժամանակակից միջոցներ:
17. Համապատասխան կրթական չափորոշիչները կամ առարկայական կողմնորոշիչ(ներ)ը Պետական կրթական չափորոշիչ «Անձի հոգեբանություն և հոգեբանական խորհրդատվություն» մասնագիտությամբ